



Համընդհանուր ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար
ազատությունների պաշտպանության և ապահովման ուղղությամբ
անհատների, խմբերի և հասարակական մարմինների իրավունքների և
պարտականությունների վերաբերյալ հռչակագիր

Իրավապաշտպանների հռչակագիր

#ԵլիրՀանունՄարդուԻրավունքների



Իրավապաշտպանների հռչակագիր

Իրավապաշտպանների հռչակագիրն ընդունվել է ՄԱԿ-ի Ընդհանուր վեհաժողովի [A/RES/53/144](#) բանաձևով

Իրավապաշտպանների հռչակագրի մշակումը սկսվել է 1984 թ. և ավարտվել Ընդհանուր վեհաժողովի կողմից դրա տեքստի ընդունմամբ 1998 թ.՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հինգերորդ տարեդարձի կապակցությամբ: Մարդու իրավունքների մի շարք հասարակական կազմակերպությունների և որոշ Պետությունների պատվիրակությունների համատեղ ջանքերով ստեղծվեց մի ուժեղ, շատ օգտակար և պրագմատիկ տեքստ: Հավանաբար ամենակարևորն այն է, որ հռչակագիրը հասցեագրված է ոչ թե լուր պետություններին և իրավապաշտպաններին, այլ բոլորին: Այն մեզ ասում է, որ բոլորս մեր դերը պետք է կատարենք՝ որպես իրավապաշտպաններ, և շեշտում է, որ գոյություն ունի մարդու իրավունքների համաշխարհային շարժում, որը ներառում է բոլորիս: Հռչակագրի ամբողջական անվանումն է՝ **«Համընդհանուր ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և ապահովման ուղղությամբ անհատների, խմբերի և հասարակական մարմինների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հռչակագիր»**: այն հաճախ ավելի կարճ անվանում են՝ **«Իրավապաշտպանների հռչակագիր»**:

1. Իրավաբանական բնույթը

Հռչակագիրն ինքնին իրավական առումով պարտադիր չէ: Այնուամենայնիվ, այն պարունակում է մի շարք սկզբունքներ և իրավունքներ, որոնք հիմնված են այլ միջազգային փաստաթղթերում ամրագրված մարդու իրավունքներին վերաբերող իրավաբանորեն պարտադիր չափանիշների վրա, օրինակ՝ Զաղաբացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը: Ընդ որում, Հռչակագիրը փոխհամաձայնությամբ ընդունվել է Ընդհանուր վեհաժողովի կողմից և հետևաբար ներկայացնում է Պետությունների կողմից՝ այն իրագործելու ուղղությամբ շատ ուժեղ հանձնառություն: Ավելի ու ավելի մեծաթիվ պետություններ Հռչակագրի ընդունումը համարում են պարտադիր ներպետական օրենսդրություն:

2. Հռչակագրի դրույթները

Հռչակագիրը մարդու իրավունքների պաշտպանների համար նախատեսում է աջակցություն ու պաշտպանություն՝ նրանց աշխատանքային համատեքստում: Այն չի ստեղծում նոր իրավունքներ, այլ փոխարենը այնպես է սահմանում գոյություն ունեցող իրավունքները, որ ավելի հեշտ լինի

դրանք կիրառել իրավապաշտպանների գործնական դերի և իրավիճակի առնչությամբ: Այն, օրինակ, ուշադրություն է հրավիրում իրավապաշտպան կազմակերպությունների ֆինանսավորման, ինչպես նաև մարդու իրավունքների չափանիշների և դրանց խախտման վերաբերյալ տեղեկատվության հավաքման և փոխանակման վրա: Հռչակագրում ամրագրված են որոշակի պարտականություններ՝ Պետությունների համար, ինչպես նաև պարտականություններ՝ բոլոր նրանց համար, ովքեր առնչվում են մարդու իրավունքների պաշտպանությանը. այն նաև պարզաբանում է իր առնչությունը ներպետական օրենքների հետ: Կարևոր է կրկնել, որ իրավապաշտպանները Հռչակագրի ներքո պարտավորվում են իրականացնել խաղաղ միջոցառումներ:

ա) Իրավապաշտպաններին տրված իրավունքներն ու պաշտպանությունները

Հռչակագրի 1-ին, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածները հատուկ պաշտպանություն են սահմանադրում իրավապաշտպանների համար՝ ներառյալ հետևյալ իրավունքները.

- Պայքարելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության համար և աջակցելու դրանց իրականացմանը,
- Անհատապես կամ այլ անձանց հետ միասին իրականացնելու մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանք,
- Ընկերակցություններ և հասարակական կազմակերպություններ ստեղծելու,
- Խաղաղ ժողովներ և հանրահավաքներ անցկացնելու,
- Իմանալու, փնտրելու, ձեռք բերելու, ստանալու և պահելու մարդու իրավունքների վերաբերյալ տեղեկատվություն,
- Չարգացնելու և քննարկելու մարդու իրավունքների վերաբերյալ նոր գաղափարներ և քարոզելու դրանց ընդունումը,
- Կառավարական մարմիններին, գործակալություններին և հանրային խնդիրների հետ կապված այլ համապատասխան կազմակերպություններին իրենց գործունեությունը կատարելագործելու առնչությամբ քննադատելու, նրանց առաջարկություններ ներկայացնելու, ինչպես նաև նրանց ուշադրությունը հրավիրելու իրենց աշխատանքի ցանկացած կողմի վրա, որը կարող է խոչընդոտել կամ խանգարել մարդու իրավունքների իրականացմանը,
- Մարդու իրավունքների հետ կապված պետական քաղաքականությունների և ակտերի վերաբերյալ բողոքներ ներկայացնել և հասնելու նման բողոքների քննությանը,

- Առաջարկելու և ապահովելու մասնագիտական որակյալ իրավական օգնություն կամ այլ խորհրդատվություն և աջակցություն՝ մարդու իրավունքները պաշտպանելիս,
- Մասնակցելու հանրային քննարկումների և դատավարությունների՝ գնահատելու համար, թե դրանք որքանով են համապատասխանում ազգային օրենսդրությանը և մարդու իրավունքներին առնչվող միջազգային պարտավորություններին,
- Անարգել դիմելու և հաղորդակցվելու ոչ-կառավարական և միջկառավարական կազմակերպությունների հետ,
- Հասնելու իրենց իրավունքների վերականգնմանը,
- Իրավապաշտպանի մասնագիտության կամ աշխատանքի իրավաչափ իրականացումը,
- Ազգային օրենսդրությամբ արդյունավետորեն պաշտպանված լինելու՝ պետության թողտվությամբ իրականացվող և մարդու իրավունքների խախտումների հանգեցնող գործողություններին կամ բացթողումներին խաղաղ միջոցներով արծազանքելիս կամ դրանց ընդդիմանալիս,
- Պահանջելու, ստանալու և սպառելու ռեսուրսներ՝ մարդու իրավունքները պաշտպանելու համար (ներառյալ արտերկրից միջոցների ստացումը):

բ) Պետությունների պարտականությունները

Պետությունները պարտավորվում են իրականացնել և հարգել Հռչակագրի բոլոր դրույթները: Այնուամենայնիվ, 2-րդ, 9-րդ, 12-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածները մասնավորապես վերաբերում են պետությունների դերին և նշում են, որ յուրաքանչյուր պետություն ունի պարտավորություն և պարտականություն՝

- Պաշտպանելու, աջակցելու և իրականացնելու մարդու բոլոր իրավունքները,
- Ձեռնարկելու այնպիսի քայլեր, որոնք կապահովեն իրենց իրավասության տակ գտնվող բոլոր անձանց՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական կամ այլ իրավունքներից և ազատություններից գործնականում օգտվելու հնարավորությունը,
- Ձեռնարկելու այնպիսի իրավական, վարչական կամ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել՝ երաշխավորելու համար, որ իրավունքները և ազատություններն արդյունավետորեն ապահովվեն,
- Ապահովելու իրավունքների վերականգնում՝ այն անձանց համար, ում իրավունքները և ազատությունները հավանականորեն խախտվել են,

- Մարդու իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ իրականացնելու առանց անպատշաճ հետաձգման և անկողմնակալ հետաքննություն,
- Ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները՝ պաշտպանելու համար յուրաքանչյուրին ցանկացած խախտումից, սպառնալիքից, հատուցումից, խտրականությունից, ճնշումից, կամ այլ կամայական գործողություններից՝ որպես հետևանք իր այն իրավունքների իրավաչափ իրականացման, որոնք վկայակոչված են սույն Յոթերորդական հրահանգում,
- Աջակցելու քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ընկալմանը հանրության շրջանում,
- Ապահովելու և աջակցելու մարդու իրավունքների պաշտպանության և ապահովման ուղղությամբ գործող ազգային անկախ ինստիտուտների ստեղծմանը և զարգացմանը, կլինեն դրանք օմբուդսմենտներ թե՛ մարդու իրավունքների հանձնաժողովներ,
- Աջակցելու և օգնելու ֆորմալ և մասնագիտացված կրթության բոլոր մակարդակներում մարդու իրավունքների ուսուցանմանը:

գ) Բոլորի պարտականությունները

Յոթերորդական հրահանգի շեշտում է, որ բոլորն ունեն պարտականություններ համայնքի նկատմամբ և դրա ներսում, և խրախուսում է մեզ բոլորիս՝ լինելու իրավապաշտպաններ: 10-րդ, 11-րդ և 18-րդ հոդվածները սահմանում են բոլորի պարտականությունները՝ խթանելու մարդու իրավունքները, պաշտպանելու ժողովրդավարությունը և դրա հաստատությունները և չխախտելու այլ անձանց մարդու իրավունքները: 11-րդ հոդվածը հատկապես անդրադառնում է այն անձանց պարտականություններին, որոնց մասնագիտությունները կարող են ազդել այլոց մարդու իրավունքների վրա և հատկապես վերաբերում է ոստիկանության աշխատակիցներին, իրավաբաններին, դատավորներին և այլն:

դ) Ազգային օրենսդրության դերը

3-րդ և 4-րդ հոդվածները սահմանում են Յոթերորդական հրահանգի հարաբերությունները ներպետական և միջազգային իրավունքին՝ նպատակ ունենալով ապահովել մարդու իրավունքների հնարավոր ամենաբարձր իրավական չափանիշների կիրառումը:

Միավորված ազգերի կազմակերպություն

A



Ընդհանուր վեհաժողով (Գլխավոր ասամբլեա)

Distr.: General

A/RES/53/144
8-ը մարտի 1999թ.

Հիսուներեքերորդ նստաշրջան
Օրակարգի կետ 110 (b)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՅԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀՈՋԱԿԱԳԻՐ

[Երրորդ կոմիտեի (A/53/625/Add.2) զեկույցի կապակցությամբ]

53/144. Համընդհանուր ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և ապահովման ուղղությամբ անհատների, խմբերի և հասարակական մարմինների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հռչակագիր

Ընդհանուր վեհաժողովն,

Վերահաստատելով, աշխարհի բոլոր երկրների մարդկանց համար մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և ապահովման Միավորված ազգերի կազմակերպություն կանոնադրության սկզբունքների և նպատակների ուսումնասիրության կարևորությունը,

Նկատի ունենալով, Մարդու իրավունքների հանձնաժողովի 1998 թ. ապրիլի 3-¹ 1998/7 բանաձևը, որով Հանձնաժողովը հաստատել է Համընդհանուր ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և ապահովման ուղղությամբ անհատների, խմբերի, հասարակական մարմինների իրավունքների և պարտականությունների հռչակագրի նախագիծը,

Նկատի ունենալով նաև, Տնտեսական և սոցիալական խորհրդի 1998թ. հուլիսի 30-ի թիվ 1998/33 բանաձևը, որում Խորհուրդը առաջարկում է, որ Հռչակագրի նախագիծն ընդունվի Ընդհանուր վեհաժողովի կողմից,

Գիտակցելով, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունման 50-րդ տարելիցի ենթատեքստում հռչակագրի նախագծի ընդունման կարևորությունը,²

¹ Տես՝ Տնտեսական և սոցիալական խորհրդի պաշտոնական արձանագրությունները, 1998, Լրացում թիվ 3(E/1998/23) գլուխ 2, բաժին Ա

² Բանաձև 217 Ա (III):

1. *Ընդունում է* սույն բանաձևին կից *Համընդհանուր ճանաչված մարդու իրավունքների* և *հիմնարար ազատությունների պաշտպանության և ապահովման ուղղությամբ անհատների, խմբերի, հասարակական մարմինների իրավունքների և պարտականությունների հռչակագիրը*

2. *Կոչ է անում* կառավարություններին, գործակալություններին, ՄԱԿ-ի կազմակերպություններին, միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպություններին, ակտիվացնել իրենց ջանքերը *Յճակագրի տարածման և նրա նկատմամբ համընդհանուր հարգանք և ընկալում սերմանելու ուղղությամբ*, և խնդրում է *Գլխավոր քարտուղարին ներառել Յճակագրի տեքստը «Մարդու իրավունքներ: Միջազգային գործիքների ժողովածու»-ի հաջորդ հրատարակության մեջ:*

*85-րդ պլենար հանդիպում
9-ը դեկտեմբերի 1998թ.*

ՀԱՎԵԼՎԱԾ

Համընդհանուր ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և ապահովման ուղղությամբ անհատների, խմբերի, հասարակական մարմինների իրավունքների և պարտականությունների հռչակագիր

Ընդհանուր վեհաժողով,

Վերահաստատելով աշխարհի բոլոր երկրների մարդկանց համար մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և ապահովման Միավորված ազգերի կազմակերպություն կանոնադրության սկզբունքների և նպատակների ուսումնասիրության կարևորությունը,

Վերահաստատելով նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային համաձայնագրեր³ կարևորությունը որպես մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանության և դրանց նկատմամբ համընդհանուր հարգանքին աջակցող միջազգային ջանքերի հիմնական տարրեր, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ այլ միջազգային գործիքների կարևորությունը, որոնք ընդունվել են ՄԱԿ-ի համակարգում, ինչպես նաև տարածքային մակարդակով,

Շեշտելով, որ բոլոր անդամները և միջազգային հանրությունը պետք է միասնաբար կամ առանձին կատարեն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը քաջալերելու և դրան աջակցելու իրենց պարտականությունը, բոլորի նկատմամբ առանց որևէ խտրականության, ներառյալ ռասայական, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի

³ *Բանաձև 2200 Ա (XXI), annex:*

ծննդի կամ այլ կարգավիճակի հետ կապված խտրականությունը, և հաստատելով Կանոնադրությանը համապատասխան այս պարտականությունը իրականացնելու ուղղությամբ միջազգային համագործակցության առանձնահատուկ կարևորությունը,

Ընդունելով միջազգային համագործակցության և անհատների, խմբերի և ընկերակցությունների արժեքավոր աշխատանքի կարևորությունը աջակցելու համար բոլոր մարդկանց և անհատների մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների բոլոր խախտումների արդյունավետ վերացմանը, ներառյալ զանգվածային, կոպիտ կամ պարբերական խախտումները, ինչպիսիք են ապարտեիդից բխող խախտումները, ռասայական խտրականության բոլոր տեսակները, գաղութատիրությունը, օտարերկրյա գերիշխանությունը կամ բռնազավթումը, ագրեսիան, ազգային ինքնիշխանությանը, ազգային միասնությանը կամ տարածքային ամբողջականությանը սպառնալիքը, Ժողովուրդների ազգային ինքնորոշման իրավունքի և սեփական հարստության և բնական ռեսուրսների նկատմամբ լիիրավ ինքնիշխանություն ունենալու իրավունքի ճանաչումը մերժելը,

Ճանաչելով միջազգային խաղաղության և անվտանգության մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացման միջև առկա կապը հիշելով, որ միջազգային խաղաղության և անվտանգության բացակայությունը չի կարող պատրվակ հանդիսանալ դրանց չկատարման համար,

Չհաստատելով, որ մարդու բոլոր իրավունքները և հիմնարար ազատությունները համընդհանուր են, անբաժանելի, փոխկապակցված և պետք է պաշտպանվեն և իրականացվեն արդար և հավասար ձևով, առանց այս իրավունքներից և ազատություններից յուրաքանչյուրի իրականացման նկատմամբ որևէ կանխակալ վերաբերմունքի,

Շեշտելով, որ մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները ապահովելու և պաշտպանելու առաջնային պարտականությունը և պատասխանատվությունը դրված է պետության վրա,

Ճանաչելով անհատների, խմբերի և ընկերակցությունների իրավունքները և պատասխանատվությունը աջակցելու, հարգելու և խթանելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ գիտելիքներին ազգային և միջազգային մակարդակներում՝

Չռջակում է,

Չորված 1

Յուրաքանչյուր ոչ իրավունքի ունի անհատապես կամ այլ անձանց հետ միասին պայթարելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության համար և աջակցելու դրանց իրականացմանը:

Հոդված 2

1. Յուրաքանչյուր պետություն առաջնային պարտավորություն և պարտականություն ունի պաշտպանել, աջակցել և իրականացնել մարդու բոլոր իրավունքները և հիմնարար ազատությունները, ընդ որում, ձեռնարկելով այնպիսի քայլեր, որոնք անհրաժեշտ են սոցիալական, տնտեսական, քաղաքական կամ այլ բնագավառներում համապատասխան պայմաններ ստեղծելու համար, ինչպես նաև սահմանել պահանջվող իրավական երաշխիքներ, որոնք կապահովեն իրենց իրավասության տակ գտնվող բոլոր՝ անձանց անհատապես կամ խմբերով, տվյալ իրավունքներից և ազատություններից գործնականում օգտվելու հնարավորությունը:

2. Յուրաքանչյուր պետություն պետք է ձեռնարկի այնպիսի իրավական, վարչական կամ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել երաշխավորելու համար, որ սույն Հռչակագրով ամրագրված իրավունքները և ազատությունները արդյունավետորեն ապահովվեն:

Հոդված 3

Ներպետական իրավունքը, Միավորված ազգերի կազմակերպություն կանոնադրության և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների բնագավառում պետության այլ միջազգային պարտավորությունների հետ համատեղ, հանդիսանում է այն իրավական կառուցակարգը, որի ներքո պետք է իրականացվեն մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և որի ներքո պետք է կատարվեն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության, ապահովման և արդյունավետ իրականացման հետ կապված բոլոր այն միջոցառումները, որոնք ամրագրված են սույն Հռչակագրում:

Հոդված 4

Սույն հռչակագրում ոչ մի բան չի կարող մեկնաբանվել որպես Միավորված ազգերի կազմակերպություն սկզբունքներին և նպատակներին հակասող կամ դրանց վնասող, կամ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կամ տվյալ բնագավառում առկա միջազգային այլ գործիքների կամ պարտավորությունների դրույթները սահմանափակող կամ դրանք վերացնող:

Հոդված 5

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և ապահովման նպատակով՝ յուրաքանչյուրը անհատապես կամ այլ անձանց հետ միասին, ազգային և միջազգային մակարդակներում իրավունք ունի՝

ա) խաղաղ ժողովներ և հանրահավաքներ անցկացնելու,
բ) Ստեղծելու, միավորվելու կամ անդամակցելու ոչ կառավարական կազմակերպություններին, ընկերակցություններին կամ խմբերին,

գ) Հաղորդակցվելու ոչ կառավարական կամ միջկառավարական կազմակերպությունների հետ:

Հոդված 6

Յուրաքանչյուր ոք անհատապես կամ այլ անձանց հետ միասին իրավունք ունի՝

ա) հիմնալու, փնտրելու, ձեռք բերելու, ստանալու և պահելու մարդու բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ տեղեկատվություն, ներառյալ հասանելիություն ունենալու այն տեղեկատվությանը, թե ինչպես են այդ իրավունքները և ազատությունները կիրառվում ներպետական օրենսդրական, դատական կամ վարչական համակարգերում,

բ) Ազատորեն հրապարակելու, փոխանցելու կամ հաստատելու այլ անձանց տեսակետները, տեղեկատվությունը և գիտելիքները մարդու բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ, ինչպես որ ապահովված է մարդու իրավունքների կամ այլ կիրառելի միջազգային գործիքներով,

գ) Ուսումնասիրելու, քննարկելու, ձևավորելու կամ պահելու կարծիքներ մարդու բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանման վերաբերյալ, թե օրենքներում և թե գործնականում, և դրանով ինչպես նաև այլ համապատասխան միջոցներով հրավիրելու հանրության ուշադրությունը այդ հարցերի վրա:

Հոդված 7

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի անհատապես կամ այլ անձանց հետ միասին զարգացնելու և քննարկելու մարդու իրավունքների վերաբերյալ Նոր գաղափարներ և քարոզելու դրանց ընդունումը:

Հոդված 8

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի անհատապես կամ այլ անձանց հետ միասին առանց խտրականության հասանելիություն ունենալ իր երկրի կառավարմանը մասնակցելուն և հանրային գործերի վարմանը:

2. Սա ներառում է նաև անհատապես կամ այլ անձանց հետ միասին կառավարական մարմիններին, գործակալություններին և հանրային խնդիրների հետ կապված այլ համապատասխան կազմակերպություններին իրենց գործունեությունը կատարելագործելու առնչությամբ քննադատելու, նրանց առաջարկություններ ներկայացնելու իրավունքը, ինչպես նաև նրանց ուշադրությունը իրենց աշխատանքի հետ կապված ցանկացած խնդրի վրա հրավիրելը, որը կարող է խոչընդոտել կամ խանգարել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը ապահովմանը և իրականացմանը:

Հոդված 9

1. Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները իրականացնելիս, ներառյալ սույն հոդվածով նախատեսված դրանց ապիովումը և պաշտպանությունը, յուրաքանչյուր ոք իրավունք ունի անհատապես կամ այլ անձանց հետ միասին օգտվել արդյունավետ միջոցից և պաշտպանված լինել այդ իրավունքների խախտման դեպքում:

2. Այս նպատակով, յուրաքանչյուր ոք, ում իրավունքները և ազատությունները հավանականորեն խախտվել են, իրավունքի ունի անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով բողոքելու, ինչպես նաև օրենքով նախատեսված անկախ, անաչառ և իրավասու դատական կամ այլ մարմնի կողմից այդ բողոքի հրապարակային քննության, ինչպես նաև այդ մարմնից օրենքին համապատասխան որոշում ստանալու, որը կապահովի իրավունքների վերականգնում, ներառյալ ցանկացած պատշաճ փոխհատուցում, եթե տեղի է ունեցել տվյալ անձի իրավունքների և ազատությունների խախտում, ինչպես նաև իրավունք ունի ցանկացած վերջնական որոշման կամ ակտի կատարման, առանց անպատշաճ հետաձգման:

3. Նույն նպատակով յուրաքանչյուր ոք անհատապես կամ այլ անձանց հետ միասին, *inter alia*, իրավունք ունի,

ա) դիմումներով կամ այլ պատշաճ միջոցներով իրավասու ներպետական դատական, վարչական կամ օրենսդրական իշխանություններին կամ պետության իրավական համակարգում առկա ցանկացած այլ իրավասու մարմնին, որը պետք է ընդունի իր որոշումն առանց անպատշաճ հետաձգման, բողոքարկելու առանձին պաշտոնատար անձանց և կառավարական մարմինների քաղաքականությունը և գործողությունները, որոնք կապված են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտումների հետ:

բ) մասնակցելու հանրային լսումներին, գործընթացներին և դատավարություններին, որպեսզի կարծիք կազմի ազգային օրենսդրության կամ կիրառվող միջազգային պարտավորությունների կամ պարտականությունների հետ դրանց համապատասխանության վերաբերյալ,

գ) առաջարկելու և ապահովելու մասնագիտական որակյալ իրավական օգնություն կամ այլ խորհրդատվություն և աջակցություն մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները պաշտպանելիս:

4. Նույն նպատակով և կիրառելի միջազգային գործիքներին և գործընթացներին համապատասխան, յուրաքանչյուր ոք իրավունք ունի անհատապես կամ այլ անձանց հետ միասին անարգել դիմելու և հաղորդակցվելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հետ կապված հարցերով հաղորդակցություններ ստանալու և դրանք քննարկելու ընդհանուր կամ հատուկ իրավասություն ունեցող միջազգային մարմինների հետ:

5. Պետությունը պետք է վարի ճշգրիտ և անաչառ քննություն կամ երաշխավորի, որ ուսումնասիրություններ են կատարվում, երբ կա ողջամիտ հիմքեր կարծելու, որ իր տարածքում կամ իրավասության ներքո կատարվել են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոտնահարումներ:

Յոդված 10

Ոչ ոք չպետք է գործողությամբ կամ անգործությամբ մասնակցի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտմանը, և ոչ ոք այդ մասնակցությունը մերժելու համար չպետք է ենթարկվի պատժի կամ անբարենպաստ այլ գործողությունների:

Յոթերորդ 11

Յուրաքանչյուր ոք անհատապես կամ այլ անձանց հետ միասին իրավունք ունի իրավաչափ կերպով իրականացնել իր մասնագիտությունը կամ զբաղմունքը: Յուրաքանչյուր ոք ունի զբաղմունքը կամ մասնագիտությունը կարող է ազդել այլ անձանց մարդկային արժանապատվության, մարդու իրավունքների կամ հիմնարար ազատությունների վրա, պետք է հարգի այդ իրավունքները և ազատությունները և գործի զբաղմունքի և մասնագիտության իրականացման էթիկայի ազգային և միջազգային չափանիշներին համապատասխան:

Յոթերորդ 12

1. Յուրաքանչյուր ոք անհատապես կամ այլ անձանց հետ միասին, իրավունք ունի մասնակցել մարդու իրավունքների և հիմնարար ազատություններին խախտումների դեմ իրականացվող խաղաղ միջոցառումներին:

2. Պետությունը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները իրավասու մարմինների կողմից պաշտպանելու համար յուրաքանչյուրին անհատապես կամ այլ անձանց հետ միասին ցանկացած խախտումից, սպառնալիքից, հատուցումից, *դե ֆակտո* կամ *դե յուրե*, թշնամությունից, խտրականությունից, ճնշումից, կամ այլ կամայական գործողություններից, որպես հետևանք իր այն իրավունքների իրավաչափ իրականացման, որոնք վկայակոչված են սույն Յոթերորդում:

3. Այս կապակցությամբ, յուրաքանչյուր ոք իրավասու է անհատապես կամ այլ անձանց հետ միասին ազգային օրենսդրությամբ արդյունավետորեն պաշտպանված լինել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտումներին խաղաղ միջոցառումներով կամ գործողություններով արձագանքելիս, դրանց ընդդիմանալիս, ներառյալ պետության թողություններով իրականացվողները, ինչպես նաև անհատների կամ խմբերի կողմից իրականացվող բռնության այն գործողություններից, որոնք կարող են ազդել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացմանը:

Յոթերորդ 13

Յուրաքանչյուր ոք անհատապես կամ այլ անձանց հետ միասին իրավունք ունի պահանջել, ստանալ և սպառել ռեսուրսներ խաղաղ ճանապարհներով մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները ապահովելու և պաշտպանելու հրատապ նպատակին հասնելու համար, սույն հռչակագրի 3-րդ հոդվածին համապատասխան:

Յոթերորդ 14

1. Պետությունը պարտավոր է ձեռնարկել օրենսդրական, դատական, վարչական կամ այլ համապատասխան միջոցներ աջակցելու համար իր իրավասության տակ գտնվող բոլոր անձանց կողմից իրենց քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ընկալմանը:

2. Նման միջոցները պետք է ներառեն, *inter alia*

ա) մարդու հիմնարար իրավունքների միջազգային գործիքների և ազգային օրենքների և կանոնակարգերի հրապարակումը և տարածումը,

բ) Հավասար և ամբողջական հասանելիություն մարդու իրավունքների բնագավառում գործող միջազգային փաստաթղթերին, ներառյալ պետության կողմից մարդու իրավունքների միջազգային այն համաձայնագրերով նախատեսված մարմիններին ներկայացված զեկույցները, որոնց անդամակցում է տվյալ պետությունը, ինչպես նաև այդ մարմիններում իրականացված քննարկումների և դրանց զեկույցների ամփոփ արձանագրությունները:

3. Պետությունը պետք է անհրաժեշտության դեպքում ապահովի և աջակցի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և ապահովման ուղղությամբ գործող ազգային անկախ ինստիտուտների ստեղծմանը և զարգացմանը, իր իրավասության տակ գտնվող ամբողջ տարածքում, կլինեն դրանք օմբուդսմեններ, մարդու իրավունքների հանձնաժողովներ կամ որևէ այլ տեսակի ազգային ինստիտուտներ:

Յոդված 15

Պետությունը պարտավոր է աջակցել և օգնել կրթության բոլոր մակարդակներում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ուսուցանումը, և երաշխավորել, որ ուսուցման համար պատասխանատու բոլոր իրավաբանները, իրավապահ մարմինների աշխատակիցները, զինված ուժերի անձնակազմը և հանրային ծառայողներն իրենց կրթական ծրագրերում ընդգրկեն մարդու իրավունքների ուսուցման համար անհրաժեշտ տարրեր:

Յոդված 16

Անհատները, ոչ կառավարական կազմակերպությունները և այլ համապատասխան ինստիտուտները կարևոր դեր են խաղում հասարակությանը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հետ կապված հարցերի մասին ավելի իրազեկ դարձնելու հարցում, այնպիսի միջոցառումների օգնությամբ, ինչպիսիք են կրթությունը, ուսուցումը, ուսումնասիրությունները այս բնագավառում, որպեսզի խորացվի հետագա փոխըմբռնումը, հանդուրժողականությունը, խաղաղությունը և ազգերի, ռասայական և կրոնական բոլոր խմբերի միջև ընկերական հարաբերությունները, հաշվի առնելով այն մթնոլորտը որում տվյալ հասարակությունները և համայնքները իրականացնում են իրենց գործունեությունը:

Յոդված 17

Սույն հռչակագրում վկայակոչված իրավունքների և ազատությունների իրականացման ընթացքում, յուրաքանչյուր ոք գործելով անհատապես կամ այլ անձանց հետ միասին, պետք է ենթակա լինի միայն այնպիսի սահմանափակումների, որոնք համապատասխանում են կիրառվող միջազգային պարտավորություններին և նախատեսված են օրենքով, միմիայն ունեն այլոց իրավունքները և ազատությունները ճանաչելու և հարգելու նպատակ և համապատասխանում են բարոյականության, հասարակական կարգ ու կանոնի և համընդհանուր բարեկեցության արդար չափանիշներին:

Յոդված 18

1. Յուրաքանչյուր ոք ունի պարտականություններ միայն այն համայնքի ներսում և այն համայնքի նկատմամբ, որտեղ հնարավոր է նրա անհատականության ազատ և ամբողջական զարգացումը:

2. Անհատները, խմբերը, ինստիտուտները և ոչ կառավարական կազմակերպությունները կարևոր դեր և պատասխանատվություն ունեն ժողովրդավարությունը ապահովելու, մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները ապահովելու և ժողովրդավարական հասարակություններին, ինստիտուտներին և գործընթացներին աջակցելու ուղղությամբ:

3. Անհատները, խմբերը, ինստիտուտները և ոչ կառավարական կազմակերպությունները կարևոր դեր և պատասխանատվություն ունեն նաև անհրաժեշտության դեպքում աջակցելու յուրաքանչյուր անձի՝ այնպիսի հասարակական կարգ ունենալու իրավունքին, որտեղ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով մարդու իրավունքների վերաբերյալ այլ գործիքներով նախատեսված իրավունքները ազատությունները լիովին իրականացվում են:

Յոդված 19

Սույն հռչակագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես որևէ անհատի, խմբի կամ հասարակության մարմնի կամ որևէ պետության իրավունք ներգրավվել որևէ միջոցառման մեջ կամ իրականացնել որևէ գործողություն, որը նպատակ կունենա վերացնելու սույն հռչակագրով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Յոդված 20

Ոչին սույն հռչակագրում չի կարող մեկնաբանվել որպես թույլտվություն պետություններին աջակցելու և նպաստելու անհատներին, անհատների խմբերին, ինստիտուտներին կամ ոչ կառավարական կազմակերպություններին այնպիսի գործողություններին, որոնք հակասում են Միավորված ազգերի կազմակերպություն կանոնադրության դրույթներին:



ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ՀՈՉԱԿԱԳԻՐ
 #ԵլիրՀանունՄարդուԻրավունքների

*ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության երևանյան գրասենյակ
 Մայիս 2018 թ.*